

լեզուի ազատագրութեանց եւ անկանոնութեանց, Ասով միանգամայն վստահ ենք թէ հեղինակն աւելի եւս մտադիր կ'ըլլայ եւ փոյթ ու խնամ կը տանի իր ընդարձակ ֆերականութեանը, զոր ըստ կարի շուտ ի լոյս պիտի ընծայէ: Նր մաղթեմքը յաջողութիւն եւ քաջալերութիւն:

Յ. Յ. ԹՈՒՆՆԻՍԻԱՆ

ԱՅՈՒՅՆ Ա. Խ. ԶԱՅԻՆԿ

Ազգիս նշանաւոր Ազնուականներէն՝ Պերճապատեւ Ա. Խ. Զուռք Ասպետն իւր Վեհափառ Ինքնակալին Աւստրիայ Փրահնիկոս-Յոսէֆի Ա. Այստե՛ր կողմէն յատուկ Ազնուականութեան տաճարաւ պատուեալ, եւ այլեւայլ առիթներով ասպետական բարէր կարգերու շքանշաններով զարգարեալ, վերջին օրերս ի մայրաքաղաքս Վիեննա գտնուելուն կը բաղձար իւր հպատակութեան եւ խորին երախտագիտութեան ցոյցերն անձամբ իւր Վեհապետին սուրբ գնձէն որով անցեալ Նոյ. ամսոյ 23 ին առաւօտը Նորին կայսերական Վեհափառութեան ներկայանալու պատիւն ունեցաւ: Գտական երկար զեղեղիկ ճառով իւր շնորհակալութիւնը յայտնեց Այսրմէ իւր անձին առատաձեռնութեան այնչափ պատուաբեր շնորհաց համար. եւ իւր գործառնութեանց ասպարիզին նկատմամբ տեղեկութիւն տուաւ: Վեհ. Այսրն երբեք երբեք խօսքը կ'ընդհատէր սիրալիր քաջալերական պատասխանով մը կամ հաղցմամբ մը: Ասպետը պաշտամբար պատասխանաւոր իմացընեղէն ետեւ՝ թէ իւր ծննդավայրն ի Պոլսոյ մէջ՝ Մուշաբ քաղաքն է: Իւր յԱրեւելք եւ մանաւանդ ի Առտանդնուպոլսի վարած բազմամեայ յարատեւ գործունէութիւն կը յիշատակէ: Եւ թէ հիմայ առեւտրական աղկալեց գործերէ քաշուած՝ մարդասիրական, հայրենասիրական եւ դիւանական ասպարիզի վրայ կը զբաղէ. եւ թէ այս պատճառաւ շատ մ'ընկերութեանց զլուխ կամ անդամ ընդունած է: Նորին վեհափառութիւնն իւր գոհութիւնն յայտնեղէն եւ զհայազգի Ասպետն յորդորեղէն վերջը որ իւր հայրենասիրական գործերը շարունակէ յօգուտ Ա. Պոլսոյ Աւստրիական հաղթականութեան, հաճեցաւ ունենդրութիւնը այս նշանաւոր խօսքերով փակել. «Եւ ես ի նշան կայսերական գահութեանս ահա բարեկամաբար ձեռքս կու տամ 2եղի»:

Ասպետն Զուռք այժմ Պատգամաւոր է Ա. Պոլսոյ Աւստրիացոց Հիւպատոսական հաստարկութեան, Անգամ փաճառականութեան սենեկին, Գրատաւոր յՕմանեան խառն տետրէ, եւ Աւստրիական գործակալ ի տեղութեան մեծաւ շնորհի: Պատուեալ է յԱւստրիական պետութեան Փրահնիկ-Յոսէֆիեան շքանշանովն եւ երկու թիւք թագի ասպետութեան երրորդ կարգի շքանշանաւ:



ԱՐՈՐԴՍՏԵՐԱՅԵՆ

ԲԺՅԱԿԱՆ

ԲՆՔՈՒՆԻ ՆԵՐՄԱՐԻՈՒՄ



այ դառն հարկաւորութիւն մը, որով հարկ է որ երկրիս վրայ ցաւ մ'անբուժելի եղանակաւ մեր գոյութեան հետ կապուած մնայ: Արդ որչափ շնորհակալ պէտք ենք ըլլալ Ամենազօրին որ այնպիսի նիւթ մը գոյացուցած է, որ միւս առն Նիւթերէն աւելի այս ցաւոյն խայթը կը բեկանէ. — այս նիւթն է բնափիոն (morphium): Ի՞նչ կ'ըլլային հանապազօր այնչափ հազարաւոր հիւանդքի՛նչ՝ բժիշկը առանց այս երկնից պարգեւին: Ո՛րչափ բազմաթիւ հիւանդութիւնք կը մնային անբուժելի, որչափ ցաւեր երկար տանէ չէին մեղմանար առանց այս բարեկամին՝ ստիպել հարկաւորութեան ժամանակ, եւ միթմարին՝ երկարատեւ եւ անբուժելի հիւանդութեանց մէջ: Սակայն երանի թէ իւր ազդեցութիւնը միշտ մի եւ նոյն ըլլար, եւ ոչ թէ՛ երկարատեւ գործածութեամբ քանձախաղցուն հիւ հետեւութիւն եւ արդիւնք յառաջ բերէր: Բնափիոնի կաթիլնեւութիւն, որ ի սկզբան անդ այնպէս յաջող արդիւնք կ'ունենար, յընթացք ժամանակաց ալ նոյն կերպով չ'ազդեր. այն առեւ միշտ պէտք է մեծագոյն քանակութեամբ առնուլ: Սակայն այս դեպքեր մէջ մարսողութիւնը կը կրէ, ախորժակը կ'անհետանայ, աղեսաց գործունէութիւնը կը զաղրի, ստամոքսն ալ ըսն մը չի հանդուրժեր, զլուխն այնպէս կը ծանրանայ իւր թէ արեւոյն:

վնեն մը նոր արվնցած ըլլար, աս զէպէս մէջ
մը բժշկին ուրիշ միջոց չէ մնար եթէ ոչ առ
ժամանակ մը հեռացընել հիւանդէն այս իր ցաւ-
երը մեղմացընող մի միակ միջոցը:

Իբր քսանուհինգ տարի յառաջ Եւրոպայի
եւ բոլոր քաղաքականացեալ աշխարհի վրայ
դիւտ մը տարածուեցաւ, որ բնափոխին ազդե-
ցութեան այնպիսի ապահովութիւն մը շնորհեց,
որ առաջ անծանօթ էր: Այսօր այն ապակեայ
խողովանիւրով արկղիկը անամէջ պողպատեայ
ասղամբ հանդերձ՝ իւրաքանչիւր բժշկի եւ
գլխաւորաբար նաեւ բազմաթիւ անձանց ալ
ձեռքէն է. անթիւ ու անհամար անձանց ցաւերը
զարեցուցած եւ անդորր հանդիստ շնորհած է.
եւ սակայն դեռ սակաւք գիտեն իրենց բարերա-
րին անունը: Էւտանուրօյի Ալեքսանդր Վուտ
(Alexander Wood) բժշկին էր, որ 1853ին գե-
ղբուր ներմուծման եւ իմանաւորի մօրթոյ մէջ
բնափոխին ներմուծանելու գիւտն ըրաւ, եւ երկու
տարի ետքը հրատարակեց: Այսու հանգիւրձ ան-
ցաւ բազմաթիւ տարեաց շարք մը, մինչեւ որ այս
դեպքն եւ սակայն այնպէս արդիւնաշատ վերա-
հատութիւնը (Opération) բժշկաց ստացուածք
եղաւ, եւ տակաւ այնպիսի տարածութիւն ստա-
ցաւ, որ այսօր ստուգիւ կարծու է չափաւորման:

Բժշկական նիւթեր՝ բուժելու նպատակաւ
ներքնամօրթոյ բլթիներուն հիւստածքին մէջ
ներմուծանելու մտածութիւնը մարդկային հան-
ճարոյ ամենամեծ գիւտերէն է. եւ ասոր գործա-
դրութիւնը՝ գիտութեան նշանաւորագոյն ար-
գասեաց մին: Ճշմարտին խօսելով Նեննէր (Jenner)
արդէն իւր ծաղկախտի պատուաստողին, որով
օտար նիւթ մը՝ կովածաղկի աւիշ՝ փոքր վերքի
միջոցաւ փութեամբ մօրթոյ մէջ կը ներմուծուի եւ
մարմնոյ հետ կը միացուի, արդէն այս շաւիղը
սկսած էր. բայց Վուտի գիւտէն ետքը միայն սոր-
վեցանք աւելի յառաջ երթալ եւ նաեւ ուրիշ
բժշկական նիւթեր ալ մարմնոյ գործարանաց մէջ
ներմուծել: Այս եղանակաւ միայն գեղն անխառն
եւ անփոփոխ մնալով արեան հետ կը խառնուի
եւ քանի մը կայլակի միջոցի մէջ կեդրոնացած՝
իւրեւ յագած լուծուածք մը՝ գրեթէ ամենատար-
թի մէջ կը ներգործէ:

Ընդհանրապէս Ներմուծումք (Injection sub-
cutane) — այսպէս կը կոչուի գիտնական բացա-
տրութեամբ այն գործողութիւնն, որով բժշկա-
կան նիւթեր մօրթոյ բլթիներու հիւստածքին
մէջ կը ներմուծանենք. — բազմաթիւ բժշկական
գեղերը սկսած են գործադրուիլ. եւ ասով յա-
ճախագոյնս կենսերի ազատած են: Այս գեղոց

նշանաւորագոյններն են եթեր (ether), բնափուտ
(ergotine), պիլոկարպին (pilocarpin), բնամորմ
(strychnine), բնասնգոյր (atropine), նեոմորֆին
կամ ուրարի (curare) եւ բնափոն (morphine):
Վերջինս միւսներէ աւելին գործածական է:
Ներմուծման եղանակն ամէն առաւելութիւն
ունի եւ բնափոն կըլլելու վնասները չունի. ներ-
մուծմամբ վայրկեանի մէջ գեղահիւթը կը ծծուի,
գրեթէ զարմանալի արագ արդիւնք կ'ունենայ:
Ստուգիւ հարկ է որ զարմանանք, երբ տեսնե-
լու ըլլանք՝ թէ ինչպէս այն հիւստեղը, որ վայր-
կեան մը յառաջ բուռն եւ սաստիկ ցաւերով
կը տանջուէր, գրեթէ անխնայութիւն մէջ կամ
առ առաւելն ներարկմանէն տասն վայրկեան
ետքը, տակաւ առ տակաւ կը հանդարտի: Զա-
ճախագոյնս կարճ ժամանակ վերջը քուռ կը
յայտնուի, կամ բարեհաճութեամբ, ապաքինու-
թեան զգացում մը, որ երկար ժամանակ կը
տեւէ: Քուռը սովորաբար շատ ժամեր կը տեւէ
եւ քնէ զարթնուիլ ազատ, թիթիւ եւ կաղզու-
րիչ կ'ըլլայ. միջոցեւ կըլլած բնափոնը մինչեւ
որ ազդեցութիւն ընէ հասարակօրէն շատ ժա-
մանակի կը կարծուի, եւ յաճախագոյնս ծանրու-
թիւն եւ թմրութիւն կը պատճառէ գլխոյ:

Սակաւաթիւն են այն ցաւերը, որոնց բնա-
փոնին արտաքուստ զգուշաւոր գործածութիւնը
մնասէ կամ ամենեւին չօգնէ. այլ ընդհակա-
ռակն շատ դիպաց մէջ ամենեւին իսկ կը բուժէ
կամ զգալի եղանակաւ ցաւը կը մեղմացնէ:
Յօդացեալական, յօդատապական, թղպին են
բորբոքաւոր ցաւոց — այս ամէնուն վրայ
բնափոնին ներմուծման բարերար ազդեցութիւնը
կը տարածուի, մերձ շնորհելով տեսական առող-
ջութիւն եւ կամ գոնեաւ բարւոքում կամ ա-
մբուում: Այս, նոյն իսկ այն հիւստեղութեանց
մէջ, որոնք ըստ իրենց բնութեանն անբուժելի
են, որովհետեւ գործարանաց մօրինակեալ
քայքայում յառաջ կը բերեն, բնափոնին ներ-
մուծումէ իւրեւ անհրաժեշտ եւ բարեխաղը
միջոց նկատուած է: Ներմուծումը կը զարդե-
ցնէ իսկոյն ցաւոյն խայթը. եւ եթէ խոհմու-
թեամբ գործածուի՝ իւր ազդեցութիւնը տա-
կաւին արմնայալ վերին ալ կը տեւէ, եւ բա-
լորովին տարբեր է քլորաֆորատէն, որ քանի մը
ժամ միայն քուռ կը շնորհէ, եւ ընդ զարմ-
նուին վերտին հին ցաւը անմեղմացած յերեւան
կու գայ:

Գժբախտաբար այս փոքր գործիքն գոր-
ծածութեան դիրքին եղանակը եւ բժշկաց զայն
յաճախ գործածելը պատճառ եղած է որ բազ-

մաթիւ ինքնակոչ անձանց ձեռքը կը գտնուի որոնք անոր սկզբնական զարմանալի ազդեցութիւնէն հրապուրեալ՝ անխտիր յամենայն գէպս կը գործածեն: Այժմ՝ փոքր քաղաքացի եւ բազմաթիւ զղիկաց մէջ իսկ տարին ի բուն, ցորեկ ու գիշեր բնափիոն կը ներմուծուի:

Հարիւրերորդական կրամը, որ երբեմն այնպէս սքանչելի ազդեցութիւն ունէր, այլ երկար ժամանակէ ի վեր ազդեցութիւն չ'ընէր. միայն յանգուգն եւ շատ կրկնեալ քանակութիւնէ վերջը (կան գրեխներ, որ օրը 2—3 կրամ եւ այն՝ մօրթը 20—80 անգամ վիտելով՝ կը ներմուծանեն), ազդեցութիւնը զգալի կ'ընէ, որ է զուարթութիւն, ցաւոյ մեղմանալ, բայց դեռ եւ ոչ քուն կրնայ ծնուցանել: Որչափ կ'ընդգիմանան մերձաւորը, այնչափ կ'աճի բնափիոնային անձանց ցանկութիւնն ու խորամանկութիւնն, որով իրենց սիրելի բնափիոնը կը հայտնայ իւր եւ զայն կը ծածկեն իրենց ընտանիքէն: Հէնգիացի մեծատուն մը, որ յետոյ զո՛՛՛՛՛՛՛ եղաւ իւր բնափիոնի մօլութեան, բնափիոնի անձնատուր եղած էր: Իւր ամուսինն աղաչանք այն արկղիկն ձեռքէն առաւ եւ այնպիսի ինամով կը հսկէր որ ալ տունը չէր կրնար ներմուծման գործողութիւնն իւր անձին վրայ կատարել: Բայց սակայն մահաւանէն վերջն, որ բնափիոնի անհաղանց գործածութեան հետեւանքն էր, իւր պարտիզին բազմաթիւ ծառերու խոռոչներուն մէջ պահուած գտան բազմութիւն մը բնափիոնի արկղիկներու եւ կէս լիտրէ աւելի առ այն պատշաճեալ զեղեր, զոր հանդուցեալը Պերլինցի ղեզափաճառէ մը՝ ընդունած էր: Իւր պարտիզին մէջ բոլոր շրջագայութիւնը յօգուտ կը գործածէր՝ անկասկած եւ ապահով իւր մօլութիւնը յազեցնելու:

Բնափիոնի ցանկութիւնն այժմ զարհուրելի եղանակաւ կ'առաւելու, եւ առանց բացառութեան կրթեալ դասակարգին մէջ — պաշտօնակալք, ուսուցիչք, ղեզափաճառք եւ գլխաւորաբար բժիշկք են, յորս առաւել կը տիրէ: —

Չլուրի դիւան տխտարանական դասագրոց մէջ նոր բլուրի մը — բնափիոնի մօլութիւն — աւելցնելու պատճառ եղաւ: Զգային դիմացաւորք (prosopalgique), անդար (migraine), ազդերացաւ, յօգացաւ, արգանդխեղք (hystérie), մշամաղձոտութիւն, եւ անգգայութիւն (blasement) ունեցող անձինք կը կազմեն մեծագոյն մասն, որ աս բնափիոնի կը ծառայեն եւ անգգալարար կ'աճի այսպիսեաց թիւը: Այսպիսի

հիւանդներ ոչ միայն անձանց կորուստ կը պատճառեն, այլ նաեւ՝ իւրայնոց: Արք իրենց ընտանեաց բարեկեցութեան անտարբեր կ'ըլլան, կանայք անփոյժ կ'ըլլան առանին տնտեսութեան, մանկանց դաստիարակութեան, եւ ինայեալ գումարն իրենց սիրելի բնափիոնի կը նուիրեն, եւ հնարագէտ նրբամտութեամբ իրենց մօլութիւնը յազեցնելու միջոցներ կը գտնեն: Բնափիոնամբը համապազօր իւր ցանկութիւնը գոհացնելով ինքզինքն ուրախ եւ երջանիկ կը համարի, եւ նոյն իսկ բնափիոն գործածելու պատճառին զաղբիւն ետքն ալ չ'ուզեր իւր մօլութիւնէն կտալի: Իւր արեւեցութեանէն կը զարթոնաւ ծանրագլուխ, տկար եւ ողորմելի, որմէ կրնայ ազատիլ միայն վերտախ մեծագոյն քանակութեամբ բնափիոն առնելով: Բնափիոնի քանակութեան եւ թունոյ ընդունակութեան աստիճանին համեմատ կ'անցնին 3 միւնչեւ 8 եւ աւելի ամիսներ, յառաջ քան առողջութեան խանգարման յայտնապէս սերտան գալլը: Այն ատեն բերանը կը չորնայ, կը ծարաւի, սիրտը կը խռոնուի, կը փսփս, սիրտը կը բարբախէ, ախորժակ չ'ունենար, կը նուազի եւ կը դժուարանայ մարմնոյ կողմանց անջատում: Մորթոյ գոյնը կը սփռուի, կը թաւալի, աչքները կը մարկն, կերպարանքը կը հիւծի, քաղաւածքը կը վարանի, ձեռքներն եւ նաեւ լեղուն կը դողան: Իւր վիճակը զարմանալի նմանութիւն մ'ունի գիւտգոյ (alcool) հնացեալ թունաւորման հետ, միայն կը գիւտգոյ թունաւորումն աւելի մարմնոյ ճարպալատ գիրութիւն կը պատճառէ, միւնչեւ բնափիոնի սովորաբար զգալի նիհարութիւն յառաջ կը բերէ: Բնափիոնամոլին մարմնոյ տկարութեան հետ կը համընթանայ հոգեկան եւ բարոյական տկարութիւն: Իւր քմահաճոյքը միշտ ծայրահեղութեանց մէջ կը շրջի, յիշողութիւնը կը տարաւայտ, մտաց պայծառութիւնը կը պղտորի ցնորական երեւոյթներով եւ գրգռութիւններով, երբեմն նաեւ անձնապաշտութեան մղմամբ: Այս թոյլ, տկար, անզգայ հիւանդտուն ալ բանի մը չի գար: Արդէն երկար ժամանակ իւր պաշտամանն եւ կողման անատակ եւ իւր ընտանեաց աւելորդ բեռ մահկանացուն կը կնքէ սովորաբար սրտի հիւանդութեամբ, ջրաց ընդհանուր հաշմութեամբ կամ յանկարծախան մահաւանք:

Թե բնափիոնամոլք ի տան չեն կրնար ազատիլ այս մօլութիւնէն, յայտ՝ միաբան են ամեն հմուտք: Ի տան բնափիոն հիւանդներու փորձերը միշտ անբաւական արդիւնք ունեցած են: Դաւեւ

խորամանկութիւն ալ չ'ըլլար. այնչափ հնարա-
գետ են բնափիոնամուղք, որ խկոյն խաբէութիւնը
կ'իմանան, երբ իրենց փոխանակ բնափիոնի հե-
ղովին՝ ըսով լին շշիկ մը տրուի: Միայն հիւան-
դանոցի մը մէջ, եւ այն՝ խիստ հակողութեան եւ
հանապազօրեայ բժշկական խնամոց ներքեւ, եւ
կիրթ եւ իրենց պաշտօնը սրտի մօտք կատարող
հիւանդապահներով կարելի է զերեւը բնափիոնի
գործածութենէն ետ կեցընել: Թէ բնափիոնամո-
լին ապաքինութեան համար անմիջապէս եթէ
տակաւ առ տակաւ բնափիոն հեռացընելը ամե-
նէն յարմար ըլլայ, յայտմ բժիշկը իրարու հա-
մամտ չ'են: Առաջին դէպքին մէջ ստուգիւ-
ցաւալի արկածներ տեսի կ'ուենան. բնափիո-
նամուղք կը կատարեն, կը յիմարին, ջղաձգութիւն
կ'ուենան, անձնապահութեան փորձ կը փորձեն,
միանգամայն կը տկարանան, իրենց երակը կա-
մայ եւ տկար կը բաբախէ: Անմիայն ինչ այն-
պիսի արկած մը կը սպառնայ, զոր որչափ ալ
չուտով առաջն առնելու համար բնափիոն ներ-
մուծուի, չ'օգտեր. եւ եթէ այս՝ քնդ մէջ պա-
տահի, այն ատեն վտանգը կրկին է: Պակայն շատ
անգամ՝ այս ճգնաժամը յաջողութեամբ կ'անցնի
առանց վտանգի. եւ եթէ այս փոթորիկն անցնի,
յաճախագոյն բնափիոնամուղք կ'ազատին ընդ
միշտ: Ցախաւ կ'առողջանան. զգալի անգործու-
նէութիւնը կ'անհետանայ, զօրութիւնը կը զարթ-
նու, առողջութիւնը վերստին յետո կը գառնայ
եւ բարի առաջադրութեամբք եւ հաստատուն
խոտանամբք կը թողուն հիւանդանոցը:

Ցաւալին այն է որ ասոնց չ'ենք կրնար վեր-
տահիլ. տակաւ առ տակաւ կը սկսի վերստին հին
ախտը: Կարի հրապուրիչ է արգիլելալ պտուղը.
կորուստը վճուալ է:

Արդի ժամանակներս բնափիոնի մուլութիւնն
ստուգիւ սպառնալից վտանգ մըն է բազմաթիւ
ընտանեաց բարեկեցութեան եւ բարօրութեան:
Միայն այն ատեն կարելի է վտանգին առջեւ
առնուլ, երբ բնափիոնաւաճառք բնափիոնը միւս
թիցներու պէս միայն բժշկաց մասնաւոր հրա-
մանաւ յաճախորդաց վաճառեն:



ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ ՅԱՍՆՈՒԿԵՑԸ

ԳՈՏՄԸԿՈՆ ՎԵՂ

(Ի 4. Հ. Ի Ր Ծ Ք Ը Լ Տ Ը)

(Երբեք չ'իջար իւր ԳԵԿՏԵՐԻՐ)



ԳԼՈՒԽ Թ.

ստ օրինաց մերցելին՝
շարունակեց Շառ-
միլ դադարէ մ'ե-
տեւ, հարկ է որ
սպաննուի մասնիչը:
Պատուաւոր արք կը
հաւաքուին վճիռը
կտրելու եւ միան-
գամայն որոշելու
թէ որուն բազուկը զայն ի գործ պիտի դնէ:
Այդ պատուը գործ մըն է, եւ սպանիչ ձեռքն
արեամբ չ'ենք կրնալ:

«Հազիւ թէ ապաքինած էի, ես ալ դա-
տաւորներէն մին անուանեցայ: Դողդոջուն ձեռ-
քով սեւ քար մը թողուցի քուէտուփի մէջ:
Արդարութիւնն էր ձեռքս վարողը, ոչ թէ
վերաւորեալ սիրտս: Համաշունչ հաւանութեամբ
մահաւան վճիռ էր տրուած:»

«Վիճակ հանուեցաւ թէ վճիռն ով ի
գործ պիտի դնէ. եւ վիճակն ինծի ելաւ:»

«Չարհուրեմք բան, գոչեց Ալեքսի սար-
սըռալով: Ի՞նչ բըրբ:»

«Համապատասխանելով օրինաց՝ պարտքս
կատարեցի:» պատասխանեց ձեռուին խզուկ
ձայնով:

«Ենկնեցայ մեր բնագաւառէն. փնտռեցի
որդւոյս տունը եւ տեսայ զինքը: Հաւատարիմ՝
էր մնացած միշտ այն անմեղ արարածին, որուն
սիրոյն համար մասնիչ էր եղած: Բայց մատնու-